



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 13.01.2023թ. ԹԻՎ 2/5-Լ
ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԴՐԱ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ»
ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝
Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն
Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի,
Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ
Ղազանջյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշմամբ
հաստատված «Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ
վճարների չափը սահմանելու և վճարելու» կարգում (**այսուհետ նաև՝ Կարգ**)
փոփոխություն կատարելու հարցը,

հաշվի առնելով պարտադիր վերապատրաստումներին չմասնակցելու
հիմքով կարգապահական վարույթներ հարուցելու քաղաքականությունը
աստիճանաբար խստացնելու նպատակահարմարությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ
մասի 21-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.5 կետի 32-րդ ենթակետի,
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի
պահանջներով,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Կարգի 51-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«51. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը չի նախաձեռնում
կարգապահական վարույթ 2022թ. պարտադիր վերապատրաստման
դասընթացներին չմասնակցած փաստաբանների նկատմամբ:

ՀՀ փաստաբանական ակադեմիան 2023-2024 թվականների որևէ

03 փետրվարի 2023թ.

թիվ 4/7-Ա

կիսամյակի համար նախատեսված վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու հարցը քննարկելու նպատակով համապատասխան տեղեկանք տրամադրելիս առաջնահերթ անդրադառնում է այն փաստաբանին, որը՝

ա. հաշվետու կիսամյակի ընթացքում չի մասնակցել որևէ վերապատրաստման դասընթացի, կամ

բ. վերջին երկու տարվա ընթացքում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անկախ տույժը մարված լինելու կամ տույժ նշանակելու մասին որոշումը ուժի մեջ մտնելու հանգամանքից), կամ

գ. որպես արտոնություն, խնդրել է կարճել վերապատրաստմանը չմասնակցելու հիմքով նախկինում հարուցված կարգապահական վարույթը, հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացին մասնակցելու հիմքով, և չի մասնակցել այդ վերապատրաստման դասընթացին, կամ

դ. հաշվետու ժամանակահատվում իր հաշվին չի մասնակցել Պալատի խորհրդի որոշմամբ սահմանված վերապատրաստման դասընթացի կամ խախտել է ժամանակացույցը:

Սույն կետում նախատեսված տեղեկատվությունը ՀՀ փաստաբանական ակադեմիայի համար ապահովում է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը: ՀՀ փաստաբանների պալատը և ՀՀ փաստաբանական ակադեմիան կարող են սահմանել համապատասխան տեղեկատվական ընդհանուր պահոցներ՝ սույն կարգով նախատեսված գործողություններն իրականացնելու համար:»:

2. Ինկորպորացված Կարգը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

03 փետրվարի 2023թ.

թիվ 4/7-Ա

ք. Երևան